



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻՂՐՈՐԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

«22» 06 2020թ.

№ 08/ԼԱ/ -

242

Հուլիսի 27-ից օգոստոսի 2-ը դիտված հիդրոտեղումաբանական

պայմանները ՀՀ-ում

Հուլիսի 27-28-ին, 30-ին՝ տեղ-տեղ, 29-ին, օգոստոսի 1-2-ին շրջանների զգալի մասում դիտվել է անձրև և ամպրոպ: Տեղումների առավելագույն գումարային քանակը գրանցվել է Գյումրիում՝ 37,9մմ, Սևանում՝ 28,7մմ, Շորժայում՝ 24մմ, Ստեփանավանում՝ 22մմ, Դիլիջանում, Աշոցքում, Ճամբարակում, Մարտունիում՝ 16մմ, մնացած շրջաններում 0-13մմ քանակությամբ: Հուլիսի 31-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը հուլիսի 27-28-ին բարձր է եղել նորմայից 2-3 աստիճանով, 29-31-ին եղել է նորմայի սահմաններում, օգոստոսի 1-2-ին նորմայից ցածր է եղել 1-2 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է հուլիսի 27-ին. Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Սյունիքի հովիտներում դիտվել է +36...+39°C, Սյունիքի նախալեռներում, Տավուշում՝ +30...+34°C, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում՝ +27...+32°C տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է օգոստոսի 2-ին. Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում՝ +8...+12°C, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +10...+14°C, Տավուշում, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում՝ +16...+19°C (Դիլիջան՝ +12°C), Արարատյան դաշտում, Վայոց Ձորի նախալեռներում, Սյունիքի հովիտներում՝ 14...+19°C:

Օգոստոսի 2-ին Գյումրիում դիտվել է ուժեղ անձրև՝ 34մմ/12ժ քանակությամբ:

Օգոստոսի 2-ին Օձունում դիտվել է ուժեղ քամի, պոռթկումներում՝ 25մ/վ արագությամբ:

Հուլիսի 28-ին Վանաձորում դիտվել է կարկուտ՝ 18մմ, 29-ին Ֆանտանում՝ 17մմ տրամագծով:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 2սմ-ով և կազմել՝ 1900.75 մ (02.08.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է 1 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան

Կատարող՝ Գ. Սուրենյան

012 31 79 29